

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 10

8 ՄԱՐՏ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթերթի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերթ ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Ձեռն-ԲԷ ԿՐ ԾԱԽՈՒԻ ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐՍՅԻ

Հասցէ

درعليه ده غاطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԹՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիս

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՏԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՈՒՆԸ

Պաշտպանությունն աչաց պայծառութիւնով կը կայանայ, երբ անոնց աչքը կը գունատի, մտածմունքի և ներութեան պատճառ կը լլայ: Եթէ այսպէս տկարացած տղու մը



SCOTT'S EMULSION

տրուկ առողջութիւնը շուտ մը կը վերականգնայ և մտածմունքը կը դադրի: Վասնզի Ընդօթի Բաղադրութիւնն հիւանդութեանց դէմ կը դնէ, և զտղայքը զօրաւոր մեծնալու կ'օգտէ և անոնց աչքերը փայլուն և զուարթ կը պահէ, միշտ

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

պահելու է. Ասիկայ զԶեղ և Չեր զաւակները դեղեր ու ցորեկ ցաւերէ և յուսահատութիւններէ կը փրկէ: Ուշագիւր պէտք է ըլլալ որ շեշը վրան այս նշանով վարդապոյն փաթեթէն մը մէջ է — եթէ կ'առնէք

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

փժշկութիւնն առած կ'ըլլաք:

Հեղբու փայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

22

Բոլոր բեղաւորները և բեղաւորները ինչ ծախս:

Ն ԿԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՈՑ

Պապը Ալի Բասսսէի, Թ. 10, «Սապահ» լրագրի տպարանին դիմ

Կ. Պոլսոյ Կայս. Գեղարուեստից Վարժարանին Նախկին չըջնաւարտներէն Գէորգ Էֆ. Գափամաճեան եւ Տիգրան Էֆ. Նալբան, երկուքն ալ վկայեալ՝ նկարչութեան ու քանդակագործութեան ճիւղերուն մէջ, որոնք հոգէն Ֆրանսա երթալով, կատարելագործած ու զարգացուցած են իրենց մասնագիտութիւնը, այս անգամ ընկերովի հաստատած են նկարչական սոյն Աշխատանոցը, ուր յանձն կ'առնեն պատրաստել՝ մեծ խնամքով ու դիւրամատչելի պայմաններով՝ զարդանկարչական աշխատութիւններ ինչպէս նաեւ զարդաքանդակներ շինութեանց համար: Ասոնցմէ զատ, կը պատրաստեն լուսանկարներու վրայէ կենդանագիրներ, գունաւոր կամ գծագրութեամբ, եւ զանազան ուրիշ գծագրական աշխատութիւններ:

Ջերմապէս յանձնարարելի է սոյն նկարչական Աշխատանոցը ամէն անոնց որոնք այդ կարգի պէտքեր ունին:

ԹԵՅ

ԹԵՅ

ԹԵՅ



Ընտիր

Հոտաւէտ

Խնայողական

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը թէ՛ պատրաստ՝ եւ թէ՛ օր ըստ օրէ հասնող թարմ եւ աղնուազոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի ավանութեամբ գոհացում տալ թէյի նոյն իսկ էն խտապահանջ սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի դաւառներու հետ եւ յանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 10

8 ՄԱՐՏ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովրդային մասեղադարան. ՀԱՐՄԱԿ:—Գրախօսական. «Իր իսեալը». ԱՐՇԱԿ ԱԼՊՈ-
ՅԱՃԵԱՆ:—Փուշն ու տասակը (Աւանդակայ) ԶԷՐԱՍԻՄ:—Տիկին Արուսեակ. ԶԱՊԷԼ Ե-
ՍԱՅԵԱՆ:—Ոսանիկ Տեր-Մարգարեանց (Բ. յօդուած) ՄԷՐՍԷՏԷՍ:—Ժողովրդային բանա-
հիւանդան. «Օրերգ». Վ. Դ:—Լիբանանի յիշատակներէս. Տրպպէյի, ԽՈՍՐՈՎ. ԳԷՇԻՇ-
ԵԱՆ:—Թափառումներ. ՄԻՀՐ:—Օրուան կեանքի ճօրեր. «Սաբեմիկ Մալեգեան». Տ. Ա:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մեծ միտքերը, իբրեւ ստեղծող ոյժեր, բանի մը հիմը (fond) և նիւթը կուտան գը-
րական աշխարհին մէջ, իսկ միջակ գրողները՝
յոտակ և պատկերաւոր ոճով մը կը ցուցադ-
րեն անոնց մտածութիւնը: Մեծ կեանք մը
կը փթթի հսկայ և լուսաւոր, որուն շուրջը
կը խռնուին նմանողներու խումբեր՝ իր դիւ-
թիչ շողերէն շլացած: Հանճարի մը հպար-
տութեան ներքին է ըսել—«Բի՛չ կարդա՛,
չա՛տ հարցասիրէ ընտելիւնը և կեանքը»:
Բայց ընթերցող հասարակութեան մեծղի զան-
գուածը որ րաց աչքով կը քալէ առանց բան
մը դիտելու, իր հետեւակի դիրքին մէջ պէտք
է որ գրչի լաւագոյն վարպետներէն ներշնչ-
ուի գարգանալու համար:

Գիրքի մը արժէքը ամէն ատեն իր սպա-
ւումէն և ժողովրդականութենէն կախում
չունի. խոր և ինքնատիպ գործերը ընտրեալ
դասակարգի մը շրջանակին մէջ մնալով,
միջնորդական մէջ յաճող՝ հասարակաց կար-
ծիքի հասանքին մէջ մտնող գաղափարները
միայն խանդավառ ընդունելութիւն մը կը
գտնեն հասարակ տարրէն, իբրեւ իր մտա-
ծումներուն ու ճաշակներուն ցուրդ: Ուստի,
բարձր ու ազնուագոյն գաղափարները հան-
րութեան մատչելի ընելու համար, ժողովրդ-

դական մատենադարանի մը հաստատութիւնը
յարմարագոյն միջոցը պիտի ըլլար, արծար-
ծելով մտաւորական կեանքը և մտրակելով
իր գանդաղութիւնը: Արդարեւ ժողովրդա-
կան թեթեւ, սիրուն գրքոյկները իբրեւ կրօ-
նական, բարոյական և գիտական գաղափար-
ներու սերմնարաններ՝ արդի լուսաւորութեան
խմորումովը պիտի ազնուացնէին խոնարհ
դասակարգին կեանքը, հոգեբանական կոն-
ւոտ և տարաշխարհիկ թերթներու տեղ,
ուր չի հանդիպիր նա իր պարզ կեանքին
պատկերներուն, և ոչ ալ կը գտնէ հոն գեղե-
ցիկին հրապոյրը: Չեմ վարանիր ըսելու թէ
գրքի կամ հանդէսի ձեւով մասնագիտական
խնամեալ հրատարակութիւններ չունինք, որ
կեանքը իր լայն հորիզոններովը և իրակա-
նութեամբ բանան նոր սերունդին առջև, ա-
ռաջնորդելու համար զայն գեղեցիկ խոյս-
ներու նուիրումին, եկեղեցական, ուսուց-
չական կամ աշխարհիկ կոչումներու պատրաս-
տութեան մէջ:

Մեր իւրացուցած մտաւոր սնունդը շատ
պարզ է և անբաւական՝ ուսեալ, ուղղամիտ
և լուրջ մարդը պատրաստելու համար: Կը-
րօնքի և բարոյականի հարցերը նախապաշա-
րուած խորում մը կ'աղդեն մեր երիտասար-

դուժեան, մինչդեռ գերազանցապէս ատոնք
կը պարունակեն իրենց մէջ բարձր և մաքուր
կեանքի մը իսկական հոյզը, վասն զի բա-
րոյականը սկզբունք մը կամ վարդապետու-
թիւնն է, այլ ապրուած և գործօն կեանքը,
ուր բարիքն օծութիւնը կը փայլի:

Այս ատղերը թեւադրեց ինծի հոյակապ
սուրբի մը կեանքին ընթերցումը, ներշնչող
և ևստարեալ կեանքի մը: Փափաքելի էր
որ հայերէնի ալ թարգմանուէր Paul Saba-
tierի Յրամսուա s'Ասիզը, այդ ոսկի գիրքը
և տիպար կենսագրականը, մոգական վրձի-
նով մը նկարուած, Ակադեմիայէն ալ պսակ-
ուած: Անշուշտ մեր ամէնէն աշխարհիկներն
ալ մէկ շունչով պիտի ըմբոյնէին Սաաւա-
ղիէի այդ զգայուն ու համեղ գրուածը:
Սովորական մեծակեաց մը է Յրանչիսկեանց
հիմնադիրը, այլ շինիչ սուրբի մը զմայլելի
կեանքը ապրած է Ժ. Գ. դարու խաւարին մէջ,
հաստատուն և մարդկային առաքինութիւն-
ներով փայլած, փրկելով Միջին Դարու քը-
րիստոնէութիւնը իր աշխարհականացման հո-
սանքէն և ալլատերութենէն: Ո՛չ միայն հոգե-
կան շինութեան, այլ նոյն իսկ մարդուն
պատմութեան ու մեծութեան տեսակէտով
յոյժ շահեկան է կարդալ մեծ Սուրբերու
կեանքը, ուր կը յայնսուին հոգեկան հրա-
շալի զօրութիւններ որոնք մարդը աստուածա-
յին բարձունքներու կը հանեն: Ծոյլ համա-
կամութեան և թոյլ հայեցողութիւններու
հանդարտութեան մէջ է՝ միայն որ կ'աճին ու
կը հասունանան սուրբերը, ո՛չ ալ կրօնական
զգացումը անուշ երաժշտութեան մը օրօրու-
մով կը պատրաստէ զանոնք իրենց երկնա-
նուէր կոչումին: Ներքին երկարատեւ ցնցում-
ներէ և մրրկումներէ վերջ միայն աստուա-
ծային խաղաղութիւնը կը վերահաստատէ
այդ գեղեցիկ հոգիներուն հաւասարակշու-
թիւնը, որով ինքզինքնին կը զգան աւելի
հանդարտ, աւելի կորովի և լուսաւոր:

Գլոտ Պէւնար կարծես թէ սուրբերու հա-
մար ըսած է «կեանքը մահն է»՝ այնքա՛ն
հզօր և վեհ արհամարհանք մը ունին նկւթին
դէմ, իսկայիսդի այնքա՛ն սաստիկ բոբրո-
քումով մը կը կոչկոճեն իրենց ջիգերն ու կը

ծայրատեն ֆիզիքական աղբուրները, որ-
պէս զի հոգիի և սիրոյ գաղափարը մարմ-
նացնեն իրենց մէջ: Մարդկութիւնն է որ
կ'ապրի իրենց էութեան մէջ: Այսու հանդերձ
այդ վշտահար հոգիները միեւնոյն ատեն ա-
մենէն զուարթն են մարդոց հոգիներուն մէջ:
Սիրոյ աստուշանը որ կը վառի իրենց մէջ,
Ջերմիկ ճառագայթներու խուրձեր կը սլացնէ
դէպի երկինք, կը սփռէ բնութեան վրայ որ
իրբւ ընդարձակ, ընդարձայն կենդանի էակ
մը, զգլխիչ նուազ մը, կը պարզէ իր զուարթ
հրապոյրը անոնց պայծառ և հուր աչքերուն:
Թաւ և ստուերոտ անտառը, ժայռին և մար-
մանդին գեղեցկութիւնը, կապոյտին ծիւ-
ծանուած լոյսը, թռչուններու երամը, որ
փակ և անիմաստ տառեր կը մնան սովորա-
կան աչքերու, լայն ու խորհրդաւոր քաղց-
րութիւն մը կը հոսեցնեն այդ սուրբ հոգի-
ներուն մէջ:

Սուրբին տիրութեան խորը կարեկցութիւն
մը կայ: Երբ առնական կիրքերուն հրայրքը
մարի, առոյգ կողմը ճմուռի, հա տակաւին
իր սրտէն քաղցր և աղու ձայն մը կը բարձ-
րացնէ, սիրոյ հրաւէր մը կ'ուղղէ այն մար-
դուն որ հոգիին փրկութեան ճամբան կ'ո-
րոնէ: Ահա այս գութն է որ սիրտերը կը
հալեցնէ և հոգիները իրեն ձգելով կը նուաճէ:

Սուրբերէն շատերը սեւ ժայռի մը ծեր-
պին մէջ, սիւնի մը գագաթը, անտառի մը
խորը կամ անապատի մը աւաղներուն մէջ
անշուշտ ծխած և հասցուցած են իրենց սրբ-
բափայլ կեանքին բովանդակ անուշահոտու-
թիւնը:

Մեծ սուրբի մը կեանքը երբ կարդանք՝
կը տեսնենք հոն կրօնական մարդը իր ոյժին
և գեղեցկութեան հնարաւոր զարդացման,
աստուածային սիրոյ բոլորանուէր պաշտումին
մէջ, աւելի հզօր և անյաղթելի զգայացու-
մով մը տարիացած՝ քան Պիգմալիոն մը որ
իր հրաշակերտ արձանին հանդէպ իր սէրը կը
վառէ և սիրոյ այդ ջերմութիւնը կեանք կու-
տայ անզգայ մարմարին:

Արմաւ

ՀԱՐՄԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ԻՐ ԻՏԷԱԼԸ».—Գրեց Մառի Կ. Արապեան.
Տպագր. Մամուլեան Իզմիր.— 1932. գիծ
4 լրս.—

Դիպուածներ կան որոնք մարդս ակամայ
թերութիւններու մէջ կը ձգեն: Անցեալ օր
Մասիսի խմբագիրը ինծի հանդիպեցաւ Չաք-
մաքըլարի զառիվարին վրայ, ծրարուած
պզտիկ բաճեք մը ձեռքին մէջ: Մենք սովո-
րական մահկանացուներս, որ քիչ շատ հե-
տաքրքրութիւն ըստած բանը ունինք մեր
մէջ, շատ անգամ մասնաւոր հաճոյք մը կը
համարինք օր մը առաջ գիտնալը թէ չաքմա-
քըլարը երեւցող Մասիսը ի՞նչ պիտի ունենայ
մէջը, կամ առաջուց տեղեկանալը թէ այսինչ
մարդը որ գրական հրապարակէն քաշուած
էր, վերստին գրելու մարմաջը ունեցած է եւ
ոտանաւոր մը զրկած է խմբագրատուն:

Եւ Մասիսի խմբագիրը՝ իր դիւրահաղորդ-
բնաւորութեամբը՝ շատ անգամ այդ համար-
ձակութիւնը տուած է մեզի հարցնելու հա-
մար թէ ի՞նչեր ունի արամադրելի: Այս ան-
գամ ալ ծրարեկը՝ զոր յօդուածի մը ձեռա-
գիրը կը կարծէի, զիս հետաքրքրեց: Բայց
փոխանակ ձեռագիրը մը գտնելու, միայն յօդ-
ուածի մը նիւթը գտայ հոն որ ինծի առա-
ջարկուեցաւ: Մարդիկ վայրկեաններ ունին
ուր կը տկարանան: Ես չկրցայ մերժել այս
առաջարկը որ զիս այսօր առաջին անգամ
կին հեղինակի մը դէմ կը դնէ,—բան մը որմէ
այնքան զգուշացած էի, շատ ծանր գտնելով
ինքզինքիս այդքան փափուկ էակներու հան-
դէպ քննադատի դերը ստանձնելու պաշտօնը:
Եւ եթէ այսօր քիչ մը խիստ բացատրութիւն-
ներու հանդիպիք, անուշտ պիտի արդարաց-
նէք զիս՝ վասն զի բոլոր յանցանքը վերջա-
պէս իմս է:

Կին եւ վէպ,—երկու բառեր որոնք ան-
կը միանան այս գիրքին վրայ: Վէպը՝ գրա-
կան սեռերու ամէնէն ճոխը եւ ամէնէն դժ-
ուարը՝ կին հեղինակի մը գրչին տակ իրա-
ն է թէ պատուարեր բան մըն է մեր գրական-

նութեան համար, ուր վէպերը այնքան քիչ
են թուով եւ այնքան ոգորմելի են կազմու-
թեամբ: Իր իտալիէն հեղինակուհին՝ պար-
զապէս յանդգնութիւն մը ըրած է երբ իր
գրական առաջին գործը վէպ մը ընելու գա-
ղափարը ունեցած է: Թէ իր այս յանդգնու-
թիւնը ո՞ր աստիճան պատկուած է կատարե-
լութեամբ, ատիկա կրնայ խնդրի առարկայ
ըլլալ, բայց վերջապէս ամէն մարդու տրուած
է է անթերի գործ մը երեւան հանելը:

Նախ ծանօթացնենք վէպին նիւթը՝ հա-
մառօտ կերպով մը:

Սիօն աղա Արդարեանի՝ Իզմիր հաստատու-
ած բարեկեցիկ Աֆիօն-Գարահիսարցիի մը
որդին, ամուսնանալէն երկու տարի ետքը իր
կնոջը հետ համաճարակի մը միջոցին քուերայէ
բռնուելով կը մեռնի որը մը ձգելով: Սիօն
աղա եւ իր կինը Հաճի Հոփիսիմէ—խաթունիկ
կին մը—զայն դգուանօք կը մեծցնեն: Մեծ
մօրը ազդեցութեամբը Գարեգին—այս է որ-
բին անունը—խնամեալ կրթութիւն մը կ'առ-
նէ, Մեսրոպեան վարժարանի չըջնը աւար-
տելէն յետոյ Պաքըլի Գոլէճը յաճախելով:
Բայց այսքանով չբաւականալով կուզէ Եւրո-
պայի մէջ առեւտրական դպրոց մը մտնել:
Սիօն աղա կ'ընդդիմանայ թոռանը այս դա-
ղափարին, զինքը տունէն դուրս վճռուելու
աստիճան զայրանալով. Հաճի Հոփիսիմէ որ
մասնաւոր տկարութիւն մը ունէր հանդէպ իր
թոռանը, յանձնառու կ'ըլլայ Գարեգինի ծախ-
քերը հոգալու եւ Գարեգին Մանչէսթըր կը
մեկնի առանց մեծ հօրը մնաս-բարով մը ը-
սած ըլլալու: Հոն իր մամիկին խնայած դը-
րամները Յովհաննէս Մեղքոնեանի—իր դըպ-
րոցական ընկերը եւ բարեկամը, որ ճամբոր-
դութիւնն ալ դիւրացուցած էր—միջոցաւ
ստանալով ուսումը շարունակելու միջոցին
Սիօն աղայի վաղածանօթ բարեկամներէն Կա-
րապետ Սեթեանի որդին Յովհաննէս յանկար-
ծամա՜հ կը մեռնի եւ Սիօն աղա անոր ան-
պաշտպան տանըմէկ տարեկան աղջիկը իր
տունը կը փոխադրէ, ասով Կարապետ Սեթե-
անի երախտեաց փոխարէն հատուցանելու
համար:

Լուսի Գարեգինի պէս Հաճի Հոփիսիմէի

աղբեցութեամբ իմամեալ դատարարակու-
թիւն մը կ'առնէ, և Սիօն աղա Գարեգինի
գէտ իր ունեցած վիշաք՝ գէպի Լուսի ունե-
ցած սիրովը կը դարմանէ :

Երկու տարի ետքը՝ երբ Գարեգինի մօ-
տալուստ գալատեանը յոյսերովը կ'օրօրուէր
Հաճի Հռիփսիմէ՝ Մենէմէն ուխտի երթալու
միջոցին ցրտառութիւն մը կ'ունենայ և կը
մեռնի : Յովհաննէս Մեղքոնեան այս դործը
Գարեգինի չիմացներ մինչև որ անոր գալու-
օրերը մօտենան : Գարեգին աւարտական յա-
ջող քննութեան մը յետոյ երբ Սեղբաք Մեղ-
քոնեանի—Յովհաննէսի Մանչէսթըր հաս-
տատուած եղբայրը որուն յանձնարարած էր
Գարեգինը—տունը կը դառնայ, Յովհաննէ-
սէն եկած համակով մը այս ցաւալի լուրը
կ'առնէ :

Իր մեծ մօրը մահէն յետոյ զինքը Իզմիրին
կապող ոչինչ կը տեսնէ, քանի որ մեծ հօրը
նկատմամբ որ և է համակրութիւն չէր զգար :
Ուստի Սեղբաք Մեղքոնեանի միջոցաւ Կալ-
կաթա Հնդկահայ վաճառականի մը քով դը-
րագիր կ'ըլլայ :

Հետզհետէ բարւոք վիճակի մը կը հասնի,
առանձին գործի տէր կ'ըլլայ, գիրք կը շինէ :
Օր մը խորհրդակցութեան մը միջոցին Լու-
սիին սիրտը կ'ընկնայ և մանկութեան օրերը
կը յիշէ ուր անոր հետ կը խաղար և գէպի
այն տարբեր զգացում մը ունենալ կը թուի
և զայն տեսնալու տենչով Իզմիրը կրկին
տեսնալու բաղձանքը կ'ունենայ :

Օր. Լուսի՝ Հաճի Հռիփսիմէի մահէն յե-
տոյ Սիօն աղային հետ առանձին մնալով ինք-
զինքը անոր այնքան սիրելի կը դարձնէ որ
Սիօն աղա հակառակ իր հռչակեալ բարկա-
սրբութեան և աղահուլթեան, թէ՛ ներոյա-
մտութեամբ կը վարուի և թէ՛ անոր կրք-
թուլիւն մը կուտայ՝ նոյնիսկ մասնաւոր դա-
սեր առնել տալով : Յովհաննէս՝ գիտակ Գա-
րեգինի զգացումներուն, թուանք և մեծ
հօրը միջև եղած հակառակութիւնը վերցնե-
լու և անոր Իզմիր դարձը յաջողցնելու ջա-
նացած միջոցին Սիօն աղա կը մեռնի :

Լուսի դարձեալ անաղաղական կը մնայ : Տի-
կին Մեղքոնեան իր քրոջը տունը կը տանի
զինքը և Տիկին Յովհաննէսեանի—փառա-

սէր, չտես և պճնող կնոջ մը—աղջիկներուն
ուսուցչուհին ընկուտ կը յաջողի :

Յովհաննէս Լուսիի լուսանկարը կը զրկէ
Հնդկաստան, ինչ որ տեսական զգացումի մը
կը փոխէ այն անորոշ զգացումը զոր կան-
խապէս զգացած էր Գարեգին, որ մեծ հօրը
մահուամբ միանգամայն ստիպուած կ'ըլլար
Իզմիր դառնալու՝ տիրանալու համար ժա-
ռանդութեան որ Լուսիի կտակուած կը
կարծուէր և չէր :

Գարեգին Իզմիր կուգայ՝ բայց Լուսիի
սիրտը դրաւելու համար—քանի որ մեծ հօր-
մէն ներշնչուած՝ անիկա գէշ կարծիք մը ու-
նէր իր վրայ—Պ. Արքար անունով, իբր
Հնդկահայ վաճառական մը : Անձնական տե-
սակցութիւնը աւելի մեծ տալադրութիւն
կ'ընէ, և հակառակ Տիկին Յովհաննէսեանի ջա-
նադրութիւններուն որոնք իրենց նպատակ
ունէին աղջիկներէն անդրանիկին ամուսնու-
թիւնը Գարեգինի հետ, Լուսիին երջանկու-
թիւնը կը կազմուի, որովհետեւ թէ՛ Տիկին
Յովհաննէսեանի տուած այցելութեան և թէ՛ ի
պատիւ իրեն տրուած հացկերոյթի միջոցին
Գարեգին և Լուսի աւելի իրարու մօտ կը
զգան ինքզինքնին :

Գարեգին վարպետ դարձուած քով մը՝
Լուսիի անցեալին վրայ կը դարձնէ խօսքը և
պատմել կուտայ Սիօն աղայի և Հաճի Հռիփ-
սիմէի կեանքը և իրեն նկատմամբ ունեցած
կարծիքը կը համկնայ : Պ. Արքար կը պաշտ-
պանէ Սիօն աղային ապերախտ անուանած
թողը—այսինքն ինքզինքը—և իրաւալ Լու-
սիի կարծիքները շրջելու կը յաջողի :

Լուսի ալ այս միջոցին տարօրինակ զգա-
ցում մը կ'ունենայ Պ. Արքարի նկատմամբ
զոր տակաւին չճանչնար : Դիպուածը այդ
հանդոյցն ալ կը լուծէ :

Լուսի Սիօն աղայի, Հաճի Հռիփսիմէի և
իր հօրը գերեզմանին վրայ նաբիխներ սըփ-
ռելու համար գերեզմանատուն կ'երթայ և
հոն ծաղիկներով շակուած այդ երեք գերեզ-
մաններուն առջև ծնրադիր կը գտնէ Գարե-
գինը.—մնացեալը դուշակելու պէտք չկայ :

«Ամիս մը յետոյ, շոգեհաւ մը կը մեկնէր
Իզմիրէն, իր հետ տանելով Լուսին և Գա-
րեգինը» :

Ինչպէս ընթերցողը տեսաւ այս համառոտութեան մէջ, հիւսուածքի ճարպիկութիւն կամ հանճարեղ գիւտեր չկան: Յաճախ նոյն իսկ գործողութիւնը քաղցնելու համար ըստեղծուած դիպուածները և սպարազանները անհումարսանման և շատ անգամ անբնական ու սովորական են: Օրինակի համար, Գարեգինի Հնդկաստանի մէջ օր մը յանկարծ Լուսին միտքը ինչպէս շատ տափակ պատահար մըն է: Շատեր իրենց մանկութեան ընկերութիւնը՝ որոնց հետ կեանքի անգիտակցութեամբ մը կատակներ և զուարճութիւններ ունեցած են և որոնք կորսուած են կամ յետոյ իրենց չուրջը ապրած են՝ կը յիշեն, բայց բնաւ մանկութեան օրերու այնքան կերպարանաւորութիւններէն յետոյ չեն կրնար այդ մանուկ դէմքին սիրահարուիլ առանց անոնց հասունութեան վրայ դադարաւոր ունենալու: Ասիկա բաւական անբնական է: Ասոր վրայ լուսանկարին ալ անմիջապէս հասնիլը՝ քիչ մը շատ քմայքոտ դիպուածով մը շատ ճարպիկ դարձուածքներ չեն անշուշտ վէպը քաղցնելու համար: Վէպը քաղցնելու համար էական համարուած բանը Գարեգինը Իզմիր բերելն է, և ասիկա երեւակայական սիրով մը ընկու տեղ՝ աւելի լաւ պիտի ըլլար երկրաբաղձութեամբ (nostalgie) մը ընել:

Գալով պատկերացուած նկարագիրներուն, պէտք է ըսել թէ Սիւն աղայի դիրք կարելի եղածին չափ աղէկ նկարուած էր գիրքին սկիզբները, բայց դժբաղդաբար հաստատուն էր մնացած մինչև վերջը՝ ինչպէս մնացած է Հաճի Հօրիսիմէն: Վէպը յաջողցնելու թէ պարզապէս համոզումի մը արդիւնքն էր այդ չըջատիսութիւնը զոր հեղինակուհին կարելի կը կարծէ ունենալ մարդու մը ծերութեան հասակի մէջ. ասիկա անըմբռնելի է մեզի համար: Բայց մեզի երեք բնական չեղեալ որ մարդ մը որ տղայ հասակէն մինչև ծերութիւնը ազահ եղած է, ծերութեան օրերուն մէջ պահ մը հրաժարի այդ մոլութենէն որ անբուժելի հիւանդութեան մը կը նմանի և միայն մահուամբ կրնայ դադարիլ: Գալով Լուսինի նկատմամբ ունեցած ներողամտութեանը, ասիկա մէկ աստիճան մը բնական է՝ բացառուած ևս սիրական պատճառաւորմանութիւններով:

Գալով վէպին միւս անձերուն, ատոնց նկարագիրները շատ խուսափուկ են կամ բնաւ չէ խօսուած: Յովհաննէս որ անձնուէր բարեկամի մը դերը կը կատարէ, երկու բառով ծանօթացուած է: «Քսաներկու կամ քոսաներկ օտարեկան կ'երեւէր, միջահասակ էր ու միակ դիտուելու արժանի բանն իր վրայ՝ ուշիմութեան և բարեսրտութեան գրոշմն էր զոր իր դէմքին վրայ կը կրէր» (էջ 11): Ասիկա վէպին հերոսներէն մէկուն իբր ծանօթացում շատ անբաւական է: Նոյնպէս իբր դպրոցական ընկեր և բարեկամ Գարեգինի նկատմամբ ոտանձնած դերերը և միջնորդութիւնները, այն դադանիքները որոնք իրեն կը պարզուէին՝ այդքան երկու բառով բացատրուած բարեկամութեան մը հետ ուղիղ չեն համեմատիր: Պէտք էր գիտնար ընթերցողը մտերմութեան մը շարունակական դարգացումը որ վիպագրին գրչին տակ շատ արհամարհելի նիւթ մը չէ: Բայց ընդհանուր առմամբ դործը արդէն այս հոգեբանական վերլուծումներէն և տարիքէ տարիք վէպին խրաքանչիւր անձին սրտին և մտքին կրած փոխփոխութիւններուն պատկերը տալուն մէջ շատ ժլատ է: Վէպին գլխաւոր յատկանիշը՝ պատմուածքի արագութիւնն է որ ընթերցողին համբերութիւնը հասցնելու երեւոյթ չունի, եթէ տենդոտ հետաքրքրութեան մըն ալ առարկան դառնալու յատկանիշը չունի:

Հետաքրքրութիւնը՝ պատմուածքին կենդանութենէն կրնար ծագում առնել, բայց կենդանի ըլլալու համար պէտք է ճշմարտահանման ըլլայ ինչ որ կը պատմուի: Ու ասիկա վէպին ամէնէն տկար կողմերէն մէկն է:

Այս վէպը իբրեւ բարբրու ուսումնասիրութեան նիւթ՝ շատ քիչ բան կը ներկայացնէ: Արդէն ներկայացուածներն ալ—կլինութեամբ բանաստեղծ հակամիտութիւնը, փառասիրութիւնը, Իզմիրցի երիտասարդներուն օտարասիրութիւնը և այլն—շատ սովորական նիւթեր դարձած են:

Նկարագրութիւններ, դիմագիծներ և պատկերներ ներկայացնելու մէջ կարի սակաւախօս, բայց երբեմն յաջողած: Իզմիրի բարբրու տեսակէտով քանի մը նշանակելի տեղեր կան, որոնք վերջապէս գրողին միջա-

վայրին ազդեցութիւնը ցոյց կու տան : Բայց շատ բնական չէ օրինակի համար Գարեգինի Պ. Աբգար անուամբ Իզմիր վերադառնալը և անձանօթ մնալը երբ անկէ մեկնելը հաղիւ 9—10 տարի եղած է : Բանբասելու և ուրիշներուն գործով այնքան հետաքրքրուելու հետամուտ համայնքի մը մէջ անկարելի է որ անձանօթ մնացած ըլլար Գարեգին, և եթէ անպատճառ կ'ուզուէր որ Գարեգին ինքզինքը ուրիշ անունով մը արգարացնելէ և Լուսիի մաքին մէջ իրեն նկատմամբ Սիօն ազայի կողմանէ ղետեղուած սխալ գաղափարները սրբազրկէ յետոյ ամուսնանար՝ աւելի կարուկ միջոցներ կային : Երկուքին ալ անձանօթ միջավայրի մը մէջ ծանօթացնելու էր երկուքը իրարու : Զոր օրինակ, կըրնար Լուսի վարժութիւնէն ալաշտօնով Եգիպտոս դացած և Գարեգին ալ հոն գտնուած ըլլար : Բայց Իզմիրցիներուն Գարեգինը ճանշնալը մէկ կողմ թողով, արդեօք Լուսի որ Գարեգինի մեկնած ատենը 11 տարեկան էր, կընայ չճանաչալ զայն որուն հետ այնքան մը տներիմ էր մանկութեան ատեն : Ու պէտք է գիտնալ թէ Գարեգին Իզմիրէն մեկնած ատեն 17 տարեկան էր և տասը տարի յետոյ 27 տարեկանին վերադարձած ատեն դիմադիծներուն վրայ շատ զգալի փոփոխութիւն մը—Լուսիէն չճանչցուելու աստիճան—կրած չէր կընար ըլլալ : Այս կէտերը շատ հարուածած են վէպին ամբողջութիւնը և քայքայած են կազմութիւնը որ կընար շատ հաճելի և շատ ալ յաջող ըլլալ, եթէ այս քանի մը կէտերուն մէջ հեղինակուհին ճարպիկ դարձուածքներով լուծած ըլլար վէպին հանգոյցը :

Վերջացնելէ առաջ ըսենք թէ իբր կին գրող Օր. Մառի Կ. Արապեան կնոջական խնդիրն ալ կը յուզէ իր վէպին մէջ տեղ մը (131 էջ) Գարեգինի և Լուսիի խօսակցութեան միջոցին, կանանց աշխատութեան ասպարէզներուն վրայ դադափարներու փոխանակութեան մը տեղի տալով :

Դրքին ոճը գիտողութեան առարկայ ոչինչ ունի : Հեղինակուհին կընայ յաջող վիպագիր մը ըլլալ կեանքի փորձառութիւններով—տակաւին շատ խեղճով ապրած կ'երեւայ—և մարդկային հոգիին զանազան չրջափոխու-

թիւններուն խորունկ ուսումնասիրութեամբ որոնց պակասէն միայն ծնած էին իր վէպին պակասութիւնները, որոնք ներքի են իբր կին գրողի մը նախընտայ գործը :

ԱՐԵԱԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ

ՓՈԻՇՆ ՈՒ ՏԱՏԱՍԿԸ

(Մ Ի Ա Ն Պ Ա Վ Ի Պ)

Հաղիւ թէ մութը անդունդին վրայէն փառատած էր, և ահա խառարը գեղեցիկ բուրաստան մը ծնցուց իր քառս արդանդէն :

Առաջին արշալոյսին շողշողուն ցոլացումին հետ Ստեղծողին աչքերը անոր վրայ ճառագայթեցին : — Կը հրճուէր բնութիւնը, պահ մը առաջ անձև ու տարտամ, նոր—աշխարհին ի տես : Ու նորակերտ եթերի դմբէթներուն նոր գործարանաւորուած լոյսի ամէն մէկ ճառագայթներէն, Եդեմի ամէն մէկ թռչուններու դայլայլներէն և մոզական ծառերու ամէն մէկ չարժուաններէն ու սօսափներէն, որոնք ոսկեթեմիջատներու հեւքը կերգէին, ծիծաղներ կը տարտղնուէին անկողն՝ կոյս գեանին վրայ, իբր թէ հրէշտակներու թիւրեղ ծիծաղներն ըլլային անոնք :

Բայց այդ կենդանի, բուրումնաւէտ գուարթութիւնները, այդ լուսնային երկնադոյն ծիծաղները ամայութեան ծոցը կը թափուէին . . . :

Խորհեցաւ Աստուած .

Այդ լոյս երաղները առանց վայելումի կ'անցնէին : Եւ ասի արատ մըն էր իր մեծափառութեան :

* * *

Դրախալին առուակները՝ իրենց հանդարտ գիւղելին մէջ երկնքի ծիր—կաթինը կը բեկբեկէին, արեւին դէմ խաղցուած հայելիի փշրանքի մը պէս : Ինքն ալ նայեցաւ վար, այդ լոյս հայելին գիրկը : Իր պայծառ, կատարուն դէմքը տեսաւ հոն : Ուզեց իր նրմանը չինել այն հողերէն, որոնք իբր անկողին կը ծառայէին այդ վաղուն հայելիներուն :

Քմայքի մը միջոցին հողէ երկու կէսեր շինեց, — երկուքն ալ յար և նման իրար, — և նման իրեն — Զանոնք իրարու մօտ բերաւ։ Կտրեց երկու հողէ կէսերը, և ո՛վ հրաշարի դիպուած, Եանվէ իր դէմը կայնած տեսաւ Ադամը, իրր թէ ինք անդամ մըն ալ ջուրերու հայելիին նայած ըլլար։ Աստուծոյ ճշգրիտ անդրադարձութիւնն էր Ադամ։

* * *

Ծիծաղներու ցայտքին ու ընտելեան զմայլանքին մէջ Ադամ կը ձանձրանար իր միայնութենէն, ինչպէս Եանվէ իր անգործութենէն կը ձանձրանար։ Երկուքին ալ մէջ ձանձրախօսի երակ մը բացուած էր։ Զիրար կ'արտայայտեցնէին զգացումի այդ միեւնոյն սեռին մէջ։ — Զանձրացող Ադամ կը քնանար շուքին տակ... — Ստեղծողը անոր կողէն առաւ Ադամին նման մը չինելու խմորին հայտ։ Բայց հիմայ աւելի ճարտար էր Եանվէն։ Ադամին կերտումը զարգացում մը աւելի տուած էր իրեն։ — Եւ Եանվէ, որ կը ձանձրանար անգործութենէ, չնախազգաց ընաւ, թէ մարդ — ամբողջութեան այդ երկրորդ՝ քրնքուչ կէսին՝ Կնոջ՝ կերտումը զինքն ամբողջ դարեր պիտի գրադեցնէր։ Զխորհեցաւ, թէ անոր մատը Տիեզերական ու մշտնջենական շարժումին լծակը պիտի ըլլար։

* * *

Ադամ, որ ա՛յնքան մտերիմն էր եղած Եանվէին, իր միայնութեան՝ ձանձրոյթի օրերուն, իսկոյն մոռցաւ զԱնիկա, երբ Եւա, Մեծ Պէրուհին եկաւ զարդ մը աւելի տալու իր վերելի արեւներուն, հմայքին ու անդուսէցնծութիւններուն։ Եանվէ ի զո՛ւր պատուէրներ տուաւ անոնց։ Ադամ մոռցած էր իր կանուխի սէրը։ Եւ այդ մոռացումը, Եւան թեւադրած էր իրեն։ Անոր աչքերը կը վառէին առաջին անգամ քառոր լուսաւորող Աստուծոյ բիւրերուն պէս։ Հրապոյր, գեղ, չորհր՛ բան մը չէր պակսեր իրեն՝ Եւային — Եւ Ադամ քննոտեցաւ Աստուծոյն, որ իրեն և Եւային միջև ա՛յդքան խորութիւն էր դրած։

* * *

Եանվէ զզջաց, բայց ուշ էր արդէն։

Անոնք — Ադամն ու Եւան — կը սիրէին զիրար երկու տաարակներու պէս. կը սիրէին, իբր թէ Սիրոյ համար ստեղծուած ըլլային միայն։ Անհոգ անզբաղ մարդերու պէս կը սիրէին զիրար։ Եւ ա՛նքն էր իրենց ամբողջ զբաղումը։ — Ադամ չէր գիտեր, թէ ա՛յդքան չնորհներուն այդքան սէրերուն ներքեւ ու Եւայի վճիտ աչքերուն խորը անդունդ մը կար, — Եանվէին մեծ վրէժը։ Անոնք համակ երկինք կը թռէին իրեն, և այդ երկնքի եթերն էր որ կը ծծէր Եւայի շրթներէն...

* * *

Եանվէ զայրացաւ...։
Ուզեց որ Ադամ մինակ չմնար, և իր չնորհներով յզփացած ուրիշ կէս մը, կին մը տուաւ անոր, բայց հիմայ ինքն էր որ մինակ կը մնար։ Երկուքը իրարմով զբաղած էին միայն, իբր թէ Եանվէն դոյութիւն չունենար։ — «Պէտք է պատժել ստամբակները», խորհեցաւ ինքն իրեն։ Եւ ահա օր մը — ահիծուած ու անէծքի օր — երբ Ադամ ու Եւա կը լողային իրենց սէրերուն մէջ, և ալ ո՛չ երես, ո՛չ միտք ունէին Եանվէին դառնալու, Եանվէ «փուշ և տատասկ թո՛ղ բուսնի» ըսաւ անոնց երեսն ի վեր։ — Խռովեցան երկուքն ալ։

* * *

Մեծ վրէժը լուծուած էր...։
Մարդ — մանուկը հարսանիք եղաւ իսկոյն, ու մեծ պէրուհին ծաղկախոտէ բռնուեցաւ։ Այդ օրէն ի վեր անէծքի այդ սարսափեցնող բառերը — փուշ ու տատասկ — բուսան մարդերուն վրայ։ Փուշը՝ հարսանիքը եղաւ, իսկ տատասկը՝ ծաղիկ։

* * *

Գոնէ այսպէս կը պատմեն մեր դիւրահաւան մամերը։

ԶԼՐԱՍՈՒՄ

Քաղ. Ժողովը՝ իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ, որ գումարուեցաւ Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ՝ Պատրիարքարանի Ա. գործակատար ընտրեց Արիս Էֆէնտի Ֆէսճեան, Օամ. դեր-հիւպատոս Կալայի, ուսնալ և բարեհամբոյր ընաւորութեան տէր երիտասարդ մը։

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ

ԲԱՆԱՀԻԻՍՈՒԹԻՒՆ

ՕՐԵՐԳ

Լոյսեր կան համար հազար
Էմմենուն մեջը դուն պայծառ .
Պայծառ ես, կենաս պայծառ
Ու ցայի մարիկդ ու խնդայ . . . :

Աղուոր ես ոսւուդ ի վեր,
Ներամ ո՛վ բերեմ քեզ ընկեր .
Ներամ լուսունկան բերեմ,
Լուսուն շողերը՝ խաղ-ընկեր :

Աղուոր ու աղուորի բերած
Աղուոր գրկի սնցուցած .
Քեզ արեւին չէ ցցուցած,
Լուսունկին հետք սնցուցած :

Օրօ՛ր, օրօ՛ր, անընման
Մարդդ չէ բերեր քու նման,
Ուչ մարն է բերեր քեզ նման,
Ո՛ւչ արեւը, ո՛ւչ լուսունկան :

Լուսունկան կապեր կամար
Ես կուլամ քեզի համար .
Պրօքի մը քնքիկ եղիր,
Ասուծու սիրուն համար :

Պիւլպիւլը պուխնան իջեր,
Վարդենուն քիփկն է քառեր .
Վարդերուն անուշ հոտուն
Աղուորիս քնիկն է տալեր :

Ծոցիկըս պախնայ կ'անեմ,
Քեզ մեջը մորն կու սնկեմ .
Ջրեմ ու պայծառ պահեմ,
Ծաղկունացը հաւասար ցուցեմ :

Օրօ՛ր, օրօ՛ր, կախեմ կախ-օրան
Ծառէ ի ծառ շուրհերը, վրան,
Ծառ շուրհեր, վրայ եկե՛ք
Շուք արեւ, աղուոր քնանայ :

Բացուած վարդ ու լան սերեւ,
Բեր պագնեմ աչերուդ վերեւ .
Քանի կայ պախնան սերեւ,
Անխար կ'ուզեմ քեզ արեւ :

Քու ծառդ ու նեղդ է ոսկի,
Քու սերեւդ վարդ կու մանի .
Քու ջուրդ է անպակ գինի,
Քու տաքդ ո՛ւր կու լինի :

Օրօ՛ր, օրօ՛ր, քններ ես,
Ծածկեր եմ, քնացեր ես .
Դամ վերմակըդ դան տանիմ՝
Վարդի նրման բացուեր ես :

Պայծառ դեմք, նուշ բերան
Թշերդ կեղեւ նրան .
Պատանդներ կը ցանկան,
Քու գեղեցիկ քուլս ախան :

Ապրիս դուն ծորով ու մորով,
Ուր պահեմ անձրդ տարերով .
Անձրդ տարերով պահեմ,
Սնանիս հազար բարիքով :

Կարին Հաւաքեց
Սանասար. Վարդ. Վ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՏԻՎԻՆ ԱՐՈՒՍԵԱԿ

Ես չպիտի դրեմ իր թատերական անցեալ
յաջողութիւններուն վրայ, իր քաղած դափ-
նիներուն և ծափերուն վրայ, ես չպիտի ներ-
կայացնեմ այն նորին ու գեղեցիկ դերասա-
նունին դոր միայն լուսանկարի մը վրայ տե-
սած եմ և որուն բնական գործունէութիւնը
բոլորովին անծանօթ է ինծի :

Ինչ որ գիտեմ իր կեանքէն, անհունա-
պէս տխուր էջ մըն է, տաժանելի եղերեր-
դութիւն մը, երկայն և յուսահատ, և որուն
միակ ու դառնագին դերը ինքը կատարած է :

Սկիւտարի մէջ խլիլիկ տուն մը տուած
էին իրեն, տուն մը որուն տանիքին կէսը
փլած էր, ստատուանները կոտրած էին և
ամէն վայրկեան կը սպառնար բոլորովին
քանդուելու : Սկիւղները կը տեսնէինք զինքը

խնամոտ և աշխոյժ, որ կրցածին չտի կը պարտկէր իր շուրջը եղած թշուառութիւնը, բան մը գամելով պատին վրայ, վարագոյնով մը գոցելով կոտրած սպակինները. բայց հետըզհետէ այնպիսի ջլատող յուսահատութիւն մը զինքը մղեց բացարձակ ինքնակրու մի մը որ օրէ օր տեսանք իր գրգռելահիններուն պատառ պատառ ինչպիսի կմախային անդամներուն վերայէն, իր սպասելը անօթութեան, աղտոտութեան, անոյցս թշուառութեան մէջ:

Սարգիս ոտայններու թանձր վարագոյնի մը ետեւէն կ'երեւար անիկա ուրուականի մը պէս, բարակ ստամիս մը մէջ փաթտած իր մաշած ոսկորները ու անընդհատ կը թափառէր չարչարուող ոգիի մը պէս: Յաճախ տեսած եմ զինքը ուսերուն ոսկորները ցցուած, մաղերը խռուած գազաթիւն վրայ, աչքերը փոսային, հալիւ կարենալով անդամները պարակել լաթի մը մէջ, թեթեւօրէն անցնիլը պարտէզին մէջէն ուր սալորենիէ մը ինկած պտուղները կը հաւաքէր ուտելու համար:

Իր գերագոյն դժբաղդութեան մէջ չափազանց հպարտ մնացած էր անիկա: Դրացիները զինքը կը հոգային, բայց պէտք էր որ ուտելիքը զնէին կոտրած պատուհանէ մը ներս. երբ տեսնէր որ մարդ չկայ, գազաֆառողի կը յառաջանար սանդուխին վրայէն և մինակ կը տեսնէինք իր երկայն ու դեղնած բազուկները որ կ'երկըննային դէպ ի պնակը: Այլ սակայն երբեմն անօթի կը մնար անիկա. յաճախ գիշերին մէջ՝ երբ ամէն կողմ լուս՝ հեռուէն միայնակ շունի մը լացը կը լսուէր կամ գիշերապահին ձօնանը կը գանգաղէր սալայատակին վրայ՝ անիկա կը ցըցուէր պատուհանէն դուրս և լուռնայքը երկարած կը պոռար:

— Անիծեալ ըլլա՛ք, ամէնքդ ալ անիծեալ ըլլա՛ք, Ժամանակին՝ ձեր տուած ծաղիկները մօխիբ ըլլան գլուխնուդ, ձեր ծափերը դեռ ականջիս մէջն են, անարգ ետասէրներ, չէ՛ ձեր գլուխը հանդիստ չպիտի ձգեմ բարձին վրայ, ելէ՛ք, ելէ՛ք տեսէք ձեր պաշտած Արուսեակը, բուռ պէս փխտակի մը մէջ կը քնակի, որդնոտած, գարշահոտ... հա՛, հա՛, հա՛, հա՛...

Ու սուղող քրքիջ մը հետզհետէ երկարաձեռքուած ողբի մը պէս կը խեղդէր բառերու կցխտուր շարքը. լորձուներ մինչև գետին կը վազէր և ուրուականային չարաշուք բան մը կար իր ամբողջ երեւոյթին ու խնդուածքին մէջ ալ:

Իրիկուն մը փրփրած և տենդագին խելացի իր անէծքներէն ու չափազանց ծարաւ պած՝ աղբին անդին ջուր փնտռելէ ետքը կ'երթայ դրացիի մը պարտէզը ու հոն ամանի մը մէջէն մնացած անձրեւի ջուրը ափովը անցադարար կը լափէ մինչև տակի ցեխը և աներեւոյթ կ'ըլլայ:

Պահի՛ անդամներ արդեօք մութին մէջ ինքն իր վրայ կծկուած անօթութիւնէն և ծարաւէն զգացած է իր աղիքներուն գալարուելը և դատարկ ստամոքսին խիթերը... երբ ցուրտ գիշերները բոլորովին մինակ՝ անքունութենէն ջղադրգիւ կը թափառէր իր մութ տունին մէջ, արդեօք ի՞նչ գառնութեամբ խորհած է լուսով ողողուած թատրոններուն, իրեն համար եղած խանդավառ ծափերուն և ընծաներուն...

Ու մանաւանդ իր մայրական կուրծքը իր կմախքի պէս չոր կուրծքը կարօտը չէ՞ր ունենար իր զաւակներուն գիրկընդխառնումին, իր հեռաւոր և ետասէր զաւակներուն որ զինքը մոռցած էին ամէնուն պէս: Կը յիշեմ որ խեղճ կինը անգամ մը իր հպարտութեան մէջ վիրաւորուած պտուղներ էր:

— Ես ո՛չ մէկուն գթութեան պէտք չունիմ, իմ ամուսինս և զաւակներս Բարիդ են... Անոնք չեն գիտեր իմ ի՞նչ վիճակի մէջ գտնուելս, ապա թէ ոչ ինծի այսպէս չէին ձգեր...

Երանի՛ թէ այս հպարտութեան ճիչը անկեղծ ըլլար և թող գոնէ իր մարած սրտին խորը հեռաւոր յոյսի մը տարտամ ցոլքը լուսաւորէր երբեմն իր անցեալի աւերակներով բռնաւորուած հոգին:

Երբ տարիներ ետքը Պոլիս վերադարձայ՝ տունը փլած էր բոլորովին և ինծի ըսին թէ Տիկին Արուսեակը Հիւանդանոց փոխադրած են:

Իցիւ թէ հիմակ հանդիստ ըլլայ հոն, և գոնէ իր յոգնած գլուխը կարենայ հանգչեցը

նեւ մաքուր անկողնի մը վրայ ու իր աղիք-
ները անօթութիւնը մոռնան բոլորովին . թեր-
եւ իր շուրջը գըտնուողները զինքը պարու-
րեն յարգանքի և խնամքի այն մթնոլորտովը
որուն իրաւունք ունի ա՛մէն անիրաւուած
արուեստագէտ , և որուն մասնաւորապէս ար-
ժանի է իր անունը :

Բայց ինչ որ ալ ըլլայ , իր ապրած դառն
և անյոյս կեանքը՝ մարդկութեան անողոք և
եսասէր աչքին տակ , ամէնէն անտեսուած ,
անցորդներու և դրացիներու հեգնական ան-
գութ ու վիրաւորիչ գթութեանը ենթակայ՝
իր վերջին տարիներու տառապագին կեանքը
մզձաւանջի մը պէս պիտի մնայ իր հողւոյն
մէջ , ու ոչ մէկ բան չպիտի կրնայ քանդել
անիկա :

Երբ մեր հասարակական կեանքով ապրող-
ներուն—արուեստագէտներուն , գրագէտնե-
րուն—ողորմելի և ցաւագին յիշատակներուն
շարքը կանցնի մաքէս , տխրութեամբ կը
խորհիմ թէ մեզմէ ո՞վ նաեւ առանց սարսուռի
և անխելով կրնայ ձակաոտել այդ քստմնելի
մզձաւանջը :

ԶՍՊԻՆ ԵՍՍՍԵՆՆԵ

ՈՍՏԱՆԻԿ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆՑ

(ՈՒԹԵՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ)

Նուապար փաշայի տունը երթեւեկած մի-
ջոցին , Ոստանիկ ծանօթութիւն հաստատած
էր վաթսուներ հինգ տարեկան այրի կնոջ մը՝
տիկին Պուրմէօի հետ՝ որ այն ատենները
դռնապանն էր եգիպտահայ զիւնապէտին :
Այդ կինը ,—ուրկէ Ոստանիկ պարբերաբար
փոխաւորութիւններ ըրած է ,—իր կարգին յա-
րաբերութեան մէջ էր Լիւսի անունով ուրիշ
կնոջ մը հետ որ իբր սենեկապանուհի ընդուն-
ուած էր Տէր-Մարգարեանցի աղադայ խօ-
սեցեալին (թէ և ոչ պաշտօնական) Օրիորդ Ե-
ւայի քով : Աղջիկը , ան ատեն հազիւ քսան
տարեկան , Յաղթութեան Կամարին մօտերը
կը բնակէր իր խնամակալին՝ Պ . Եէլվիրոյի
հետ , անխոյժ , անհող ու քիթին ծայրն իսկ

չտեսնող մարդ մը՝ որուն թոյլ ընաւորութե-
անն օգտուելով սպասաւորները շահագործումի
առարկայի մը վերածած էին տունը : Վեր-
ջէն՝ ոստիկանութիւնը քիչ մը կարգ կանոն
դրած է այդ տան մէջ , Ոստանիկի ձերբակա-
լութեան օրերը յայտնուած կարգ մը իրողու-
թեանց առթիւ :

Յայտնի չէ՛ թէ ի՞նչ պարագաներու բեր-
մամբ , և կամ ի՞նչ տեսակ դիպուածի մը
արդիւնքով Ոստանիկ աչքը նետած է այդ
աղջկան վրայ , և անոր հակայ օթիտին տի-
րանալու ծրագիրը յղացած : Կ'ըսեն թէ Ոս-
տանիկ Օրիորդ Եւայի (մականուամբ «ար Թո-
մաղա» ,—դռնէ այսպէս յիշատակուած է սեղ
մը ,—) ներկայացուած է Ժուռնալ Տը Ֆրանսի
խմբագիր Պ . Բրապիէ Ֆօտէրի հետ , թէ և
այդ մասին բան մը չէ նշանակուած Պ . Մա-
սէի գրքին մէջ , գլխաւոր աղբիւրը՝ յօդ-
ուածներու այս շարքին : Խնդիրը հոն է որ ,
գաղափարը յղանակէն վերջ Ոստանիկ չէ կա-
սած կէս ճամբուն իրայ , և իր ծրագիրը ա-
ռաջ տարած է կատարեալ վարպետութեամբ ,
մինչեւ որ յաջողած է վերջնականապէս գրաւել
Օրիորդ Եւան : Պէտք է ընդունիլ որ շատ դժուար
դործ մը չէ՛ եղած ատիկա : Աղջիկը՝ արդէն
իսկ թեթեւ խառնուածքի աէր , իսկոյն հրա-
պուրուած է վանքի բաղդախնդրին կեղծ
տխտղոմներէն : Իբր գիտուն մը , իբր Կրին-
հօնի պսակաւոր մը , իբր դիտական ակադե-
միի անդամ մը չէ՛ որ Ոստանիկ կրցած է
զայն հրապուրել . առաջին օրէն՝ օրիորդ Եւա
զայն նկատած է զաւակը փարթամ ընտանիքի
մը , և սիրտը անոր տալով կարծած է հար-
թել արահետը Արեւելքի առասպելական ճո-
խութիւններով և հրնայրներով առլցուն
կեանքի մը՝ որ դերադանցապէս պիտի յար-
մարէր իր խառնուածքին : Այս տեսակէտէն
դուրս , անկարելի է ուրիշ կերպով բացատ-
րել իր գիւրահաւանութիւնը : Ոստանիկ որ-
չա՛փ ալ ինքզինքը հարուստ ցոյց տար , կըր-
կին չպիտի կրնար արդիւնք մը ձեռք բերել ,
որովհետեւ հետապնդած աղջիկը արդէն իսկ
միլիոններու հետ կը խաղար , և առատօրէն
դրամ կը մոխէր : Միւս կողմէ ,—ինչպէս ըսի
արդէն ,—Կրինհօնի պսակաւորը գեղեցիկ ալ
չէր , որպէս զի կարենայինք ենթադրել թէ

Օրիորդ Եւա ատկէ հրապուրուած է (*): Պ. Մասէ կը հաւատէ թէ Ոստանիկ՝ պուռոս, անկանոն դէմք մը ունէր, գոռու մագերիով, «ոռոսական նապաստակի կը որ աչքերով»։ պղտիկ մօրուք մը կ'երկարէր դուշին ծայրը, սե՛ իր պերխերուն պէս, և հակառակ վայելուէ երեւալու ջանքերուն, շատ հեղ իր շարժու- ձեւերէն յայտնի կ'ըլլար թէ հասարակ ծա- գում մը ունեցած է։

* * *

Ոստանիկի և Օրիորդ Եւայի յարաբերու- թեանց գլխաւոր միջնորդները եղած են եր- կու կիներ՝ զորս յիշատակեցի քիչ մը վերը։ մէջ մը Նուարար փաշայի դռնապանուհին՝ այրի տիկին Պուրմէօի, — որ վերջէն Ոստանիկի ծա- ռայութեան մտած է, — մէջ մըն ալ Օրիորդ Եւայի սենեկապանուհին, Լիւսի։ Ոստանիկ տիկին Պուրմէօի, և այս վերջինն ալ Լիւսիի հետ երկուսն էր զորքը, և վերջ ի վերջոյ յա- ջողած են Օրիորդ Եւայի ուշադրութիւնը հը- րաւիրել երիտասարդին վրայ, որ ամէն իրի- կուն կ'երթար թափառկոտիլ Բորթուկալցի աղջկան պատուհաններուն տակ։ Երկու կիներն ալ մեծ զգուշութեամբ շարժած են, այնպէս որ, մինչև առեւանգութեան օրը, օրիորդ Եւայի խնամակալը բան մը չէ կռահած։

Աղջկը՝ բաւական ատեն չէ գիտցած թէ ո՛վ է իրենց տան առջև թափառող այդ ե- րիտասարդը, և Լիւսիի միջոցաւ միայն հա- կըցած է թէ Բարիդի մէջ ամէնուն ծանօթ եղող մեծախարթամ աղնուական մըն է, հա- լանականաբար իր աղուոր աչքերուն սիրա- շարած։ Քիչ առ քիչ, աղջկը սկսած է համ-

(*) Ոստանիկի աշակերտութեան միջոցին Մայր Վարժարան յաճախող անձ մը՝ որ անոր դասընկերն է եղած, կը հաստատէ այս կար- ծիքը, աւելցնելով սակայն թէ Ոստանիկ՝ հակառակ իր ագեղութեան՝ շատ տաքարեւ տղայ մըն էր։ Այդ միեւնոյն անձը կը յիշէ այսօր թէ Տէր Մարգարեանց Մայր Վարժա- րանէն սկսած է իր առաջին խարդախութիւն- ները, որոնց համար կարծեմ ճամբու դրուած է, ինչպէս վերջէն, Բարիդի մէջ, միեւնոյն պատճառներով վտարուած է Մ. — Ռափայէլ- ան վարժարանէն։

առնել այդ հովուերգութիւնէն, և տակաւ առ տակաւ սկսած է ինքզինքը ցոյց տալ պա- տահանէն, ժպիտներ փոխանակել, մէկ խօս- ըով յուսատու ընթացք մը բռնել։ Շատ չանցած՝ կարգը եկած է սիրային թղթակ- ցութեան մը, և երկու կողմէն բաւական նա- մակներ փոխանակուած են Լիւսիի ու տիկին Պուրմէօի միջոցաւ։ Ոստանիկ, ինքզինքը փալտուն դիրքի մը տէր ցոյց տալու համար, միշտ իր նամակները գրած է տիկին Պուր- մէօի կողմէ Նուարար փաշայի տունէն գող- ցւած ու պաշտօնական վերտառութիւն կրող թուղթերու վրայ։ Դժուար չէ գուշակել թէ շատ գեղեցիկ սողեր գրած է Օրիորդ Եւայի, մանաւանդ որ միշտ զմայլելի նամակագիր մը եղած է, ինչպէս կը յայտնուի արդէն օրա- թերթ Մասիսի մէջ հրատարակուած դրաբար նամակէն։ Այդ նամակները ոտիկանութեան կողմէ դրաւուած ըլլալով, անձանօթ մնա- ցած են։ Նոյն ինքն Պ. Մասէ մէկ հատ մը միայն կը յիշատակէ, որուն մէջ Ոստանիկ պատկերոտ ոճով մը՝ «իւ էութեան երկինքին վրայ չողացող ոսկի ցոլքին» կը նմանցնէ Բորթուկալցի օրիորդը։

Նամակներէն վերջ կարգը կու դայ առ- սակցութիւններու, և Լիւսիի վարպետու- թեան շնորհիւ երկու սիրահարները կը սկսին ժամադրութիւններ տալ, և նոյն իսկ առան- ձինն առնուիլ երբեմն Շան դ'Էլիզէի կող- մերը, ու մասնաւորաբար Պուլոնի անտառին մէջ՝ որուն մանուածապատ անցքերը սքան- չիլի թաղստոցներ կրնան դառնալ այդ կարգի յարաբերութեանց համար։ Աղջկան խնամա- կալը, Պ. Եէլվիրօ, միշտ բանէ մը տեղեկու- թիւն չունի, և Լիւսիի օր ըստ օրէ ալ առելի դաղսնապահ կը դառնայ, շնորհիւ այն ըն- ծաներուն (ընդհանրապէս դոհարեղէններ) զորս Ոստանիկ շարունակ կը շուայէ իրեն։

* * *

Տէր Մարգարեանց չուղեր այդ սովոր ձեռ- քէն փախցնել։ Գիտնալով որ Օրիորդ Եւա իր միլիոններով շա՛տ ծանօթ է Բարիդի մէջ, կը մտածէ շահադործել անոր հետ հաստա- տած յարաբերութիւնները, և այլ և այլ մի- ջոցներով հոս հոն լուր կը տարածէ թէ ար-

դէն իսկ նշանուած են, և թէ հետեւաբար՝ աղջկան օժիտը մէկ օրէն միւսը ամբողջովին իր ձեռքը պիտի անցնի: Այս լուրը շատ կը տարածուի Բարիդի մէջ, և Ոստանիկի վարկը, արդէն իսկ տկարանալու վրայ, նոր բարձրացում մը կը ստանայ: Ինք ալ իր կողմէ ամէն բան կ'ընէ այդ տարածացնութեան հաստատ հիմ մը տալու համար: Նախորդ յօդուածներէն մէկուն մէջ ըսի արդէն թէ ինչպէ՛ս յատկապէս վարձուած ծերուկ մը կը պտտայնէր իրեն հետ, և թէ ինչպէ՛ս զայն ամէն տեղ իր իր ապագայ աները կը ներկայացնէր:

Այդ թուականին է որ իր խարդախութիւնները նոր զարկ մը ստացած են. Ոստանիկ նոր փոխառութիւններ կնքած է, նոր վաճառատուններու ծանօթացած, ապրանքներ շորթած, մարդիկը շլացնելով իր նշանածին միլիոններով:

Միւս կողմէ ալ չէ ուզած ժամանակ կորսնցնել, և առանձին տեսակցութեանց միջոցին առաջարկած է Օրիորդ Եւայի որ օր առաջ ամուսնութիւն մը կնքելով վաւերական հանդամանք մը տան իրենց յարաբերութիւններուն: Աղջիկը չէ ընդդիմացած. բնաւ ընդհակառակը ինք ալ իր կողմէ ատոր փափաքած է, մտածելով թէ կեանքին ամէնէն սիրուն ու հաճելի փոփոխութիւններէն մէկը պիտի ըլլայ այդ ամուսնութիւնը, — զոր Ոստանիկ կը փափաքէր հայկական ծէսով կատարել, — տեսակ մը անուշ գերութիւն, որու միջոցին ամէն հոգէ աղատած, ամէն դործի վրայ մտածելու հարկէն զերծ, իր սիրոյն մէջ միայն պիտի թաղուէր՝ աշխարհ անով միայն լեցուած տեսնելով. մէկ խօսքով, այդ ամուսնութիւնը իրեն կ'երեւար երջանկութեան արահետի մը պէս՝ որուն երախները լայն լայն բացուած ըլլային իր առջև:

Հաստաճանութիւն դոյնալուն պէս, Ոստանիկ պատրաստած է իր ծրագիրը, և բացարձակ Օրիորդ Եւայի թէ առանց առեւանգութեան մը անկարելի է Պ. Եւելիբրոյի հաւանութիւնը ձեռք ձգել: Աղջիկը ատոր ալ չէ ընդդիմացած, և Ոստանիկ, քիչ մը դրամ ձարելով տիկին Պսլոմէօն Պէլճիզա գրկած է,

ու Պրիւսէլի մէջ, Մատէն փողոցին վրայ վարձել տուած է պղտիկ յարկաբաժին մը՝ ուր ամուսնութիւնը պիտի կատարուէր: Հայթայթած է նաեւ Վանյի կնոջ ամուսնական տարազ մը, ըր բոլոր կազմածներով, և յարմարացած Օրիորդ Եւայի որ անհամբերութեան կ'ուռէր ինքզինքը: Քահանան որ զիրենք պիտի պսակէր, Վանյի մըն էր, Տ. Գալուստ Երուսնդեան, զոր Ոստանիկ Փոքշահէն Պրիւսէլ հրաւիրած է առատ նուէրներու խոստումով, և որ կարծեմ բնաւ չէ շարժած տեղէն:

Այսպէս, ամէն պատրաստութիւն տեսնուելէ վերջ, գիշեր մը, Ոստանիկ և Օրիորդ Եւա՝ ձեռքիցից Պրիւսէլ անցած են՝ ուր իրենց կը սպասէր Նուպար փաշայի դռնապանուհին՝ այրի տիկին Պուրմէօն՝ որ Տէր Մարգարեանցի ծառայութեան մտած էր, հաւանականաբար իր նախորդ տիրոջմէն վճարնուած ըլլալով (*): Ամուսնութիւնը սակայն չէ կատարուած, — յաջորդ յօդուածով պիտի ըսեմ թէ ինչու, — և ութ օրուան կարճ ժամանակամիջոցէ մը վերջ, մինչդեռ Ոստանիկ Պէրլինի և Վիկտորիայի ձամբով Պոլիս նստած է ինքզինքը՝ դրամ ձարելու համար, Օրիորդ Եւա ալ անդառնալի կերպով անցած է Բարիդ, ընկերակցութեամբ Պ. Եւելիբրոյի, որ իր իսկ խնդրանքով Պրիւսէլ գացած էր զինքը վերադարձնելու համար:


ՄԷԼՈՍԷՏԻՍ

(*) Այդ տոհմները, Նուպար փաշա Ոստանիկի առջև ալ իր դուռները դոց պահելու տար: Ո՛չ թէ միայն հոս առած էր թէ իր երբեմնի պաշտպանեալը շատ ուղիղ ու կանոնաւոր կեանք մը չէր անցըներ Բարիդի մէջ, այլ նաեւ ինքն իսկ առիթներ ունեցած էր անոր խառնուածքին և հակամտներուն յուսութիւնը հաստատելու: Արդէն անկէ առաջ ալ, Ոստանիկի ուսանողութեան միջոցին, Նուպար փաշա միեւնոյն պատճառներով դադրեցուցած էր այն դրամական նպատակները, զորս անոր կ'ընէր պարբերաբար:

ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

Մասիսի խմբագրութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Կայս, անձնական Գանձուն նախարար Վսեմ. Յովհաննէս Էֆ. Սազըզի և որդւոյն՝ Արմենակ պէյի, իրենց ամուսնոյն և մօր՝ Տիկին Սաթենիկ Սազըզի մահուան առթիւ որ դառն սուգով մը կը համակէ այգ՝ պատուական ընտանիքը: Յուզարկաւորութեան ախուր հանդէսը, որ կատարուեցաւ չորեքշաբթի առաւօտ Բերայի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցին, համակիր վշտակցութեան արտայայտութիւն մը եղաւ՝ պետական պաշտօնատարներու, ամէն ազգի բարձրաստիճան անձնաւորութեանց և ժողովրդեան ստուար բազմութեան մը կողմէ՝ ողբացեալ Տիկինջ Վսեմ. ամուսնոյն և որդւոյն նկատմամբ և արժանաւոր յարգանք մը՝ հանգուցելոյն յիշատակին:

ՏԸՊՊԷՅԻ



ԼԻՔԱՆԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

Ծովեղբերքի ճամբով, հէնց ջուրերուն հետ խառնուած՝ Պէյրութի հիւսիսային արեւելքի գիծով բլրակներու մէջտեղումները արժաւի ծառեր կը բարձրանան միւս մինակը կարճ ու գիրցած ձիթենիներու և caroubներու մօտ, որոնց կողքին ուժգնակի կը դարնէ կ'անցնի Նահր-էլ-Քէլպ: Ու կը տեսնես այնքան բընականօրէն բացուած ջուրի փխրուն ու անկայուն փոսեր, մայր գետէն ճամբանին կորսնցուցած համեստ վտակներ, որոնց ափերուն մօտ բնութիւնը առատօրէն սակայն կուսամաղեր (capilaire de monpellier) ու վայրի եղիններ բուսցուցած է: Ամէն ինչ որ կ'աճի ու կը ծաղկի հոն, պզտիկ ու աննշան բուսականութիւններ, կրնայ բուռի որ հազիւ թէ կ'ապրին, սրովհետեւ ջուրի մեծ ցայտք մը տարուան որ և է չըջանին պիտի կրնայ թաղել զիրենք յաջորդող աւաղակոյտի մը տակ: Ինչ որ կը մնայ հոն, ու ինչ որ իսկապէս գեղեցիկ է, իրար գիրկնդիւսաւնուող ծառերուն թարմ դալար հովանին է, ջուրի զուլալ վազքերը, որոնց մօտը լեռնաբնակ

Մարօնիար Բաժենիը, ու գիշերելու համար մաքուր պանդոկներ չկնած է: Պզտիկ Մարօնիտ եկեղեցի մըն ալ ճիշտ կ'անակը անոնց, անհրաժեշտօրէն:

Տըպպէյի՝ Լիբանանի դրօսատեղիներուն էն աննշանը, սակայն ամէնէն շատ յաճախուածն է:

Որ և է օր կարելի է հանդիպիլ հոն, մասնաւորապէս կիրակի ու տօն օրեր, Սիւրիացի կայտառ ու յաւերժապէս զուարթ ընտանիքներու, որոնք իրենց մանկամարդ ազգջիւններու և անհոգ աղաւարդերու բովանդակ հարստութիւնովը կուգան կը մեկտեղուին արաբական ջինջ գիշերներու հովուերգութիւնները մալի ընել տալու: Գաւաթները կը պարպուին, դարեջուրի շիշերը կը նսրողուին, մէկ, երկու, երեք, ու հապիպդի օրիորդներ Սիւրիական յատուկ պարերը կը սարքեն, գլուխի, մէջքի, ու առաջամասին շարժուածներովը, մինչև որ ստուերոտ անկիւնէ մը վարպետ Ուուս զարնող մը սրտառուչ եւ լի մը սկսի: Ու կը լռեն ամէնն ալ:

Տըպպէյի հանդարտ օր չունի: Երկաթուղին իր իսկ մէջէն կ'անցնի, ու Եգիպտոսէն կամ Եւրոպայէն որ և է անցորդ տեղացի կամ օտար վերջապէս առտուն չողեկաւքի մաքուր վակոններուն մէջ կը նստուին, կանգ կառնեն Տըպպէյի առջև, կը զուարճանան ու իրիկունը շատ մութին, քայլ մը հեռուն ծովեղբերքի կայարանը կ'իջնեն բարեւելու համար լեռներուն շատ ետեւէն վերադարձող վայրաշարժը, որ հազիւ հինգ վայրկեան կ'սպասէ:

Սիրուն է տեսնել սակայն իրարանցումը անոնց. անոնք որ ուղած չեն հոտ գիշերել, վերադառնալու են հարկաւ դէպի Պէյրութ: Ու կը սուլեն, կը ձգեն բալօրն ալ, տեղացին իր արարելէնովը կամ ֆրանսերէնովը, Եւրոպայիները՝ ամէնը իրենց լեզուներովը, վակոններէն ներս կը խուժեն:

Ատեն մը ձեռքերը դուրս կը մնան վակոնին պատահաններէն, գլխարկներ ու թաշկինակներ կ'երևան Տըպպէյի մնացողներուն համար: Կէս ժամ վերջը Պէյրութ կը հասնին:

Ու լայն շքեղ քաղաքը՝ որ ցրեկէն ու արեւէն անխոնջ, այս անգամ գիշերուան լոյսերը կ'ողտղէ զինքը մինչև առտու շարուհակուող բովանդակ խրախճանքներուն հետ:

Առտուն Տըպպէյի համար այցելուողները չեն պակսիր:

ԽԱՍՐԱՎ ԲԵՇԵՆՍԱՆ

ՔԱՓԱՌՈՒՄՆԵՐ

«Ճերմակ վարդ»ը . — Տարօրինակ ամուսնալուծում մը : — Աղիս գրագէտներու կեանքն :

Նոր աշխարհի մարդերը որոնցմէ եղական նորութեանց արձագանգներ կը հասնին միշտ, հիմակ ալ ստեղծած են «Ճերմակ վարդ»ը, որ սա մեր գիտցած վարդերուն կը նմանի ճիշտ, սա տարբերութեամբ որ մինչ այս վերջինները իրենց բոլորն հետ փուշեր ալ ունին, անոնք, առջինները, ո՛չ փուշ ունին ո՛չ ալ բոլոր :

Բացատրենք :

Այս Ճերմակ վարդ կոչուածը ընկերակցութիւն մըն է որ կը բաղկանայ Ամերիկացի մանկամարդ օրիորդներէ, — միւսերէ պիտի ըսէի, եթէ չիշէի Քրիզանթէմին խօսքը, «Երբ Ամերիկոններուն համար միւս բան, երբեք չի հաւատա՛ք, ոսկոր են ընդհակառակը» :

Այդ ընկերութեան անդամ գրուելու համար հետեւեալ պայմանները ընդունելու է :

Ա. — Սիրելով և կամ գէթ հաւանութեամբ ամուսնանալ :

Բ. — Առանց աղմուկի և առանց չափ ամուսնանալ, կարելի եղածին չափ պարզ արարողութիւններով :

Գ. — Երդնու միշտ անստգլուտ կիներ մնալ, կիներ, որոնք բուրդ պիտի մանեն և կատարեալ սէր մը պիտի տրուեն իրենց ընտանեկան վառարանին շուրջը :

Առաջին պայմանը ամէնուն ուղածն է : Երկրորդը, — այսպէս կ'ենթադրեմ, — էրիկ մարդոց գործին չի դար : Եւ երրորդը, որ պայմաններուն ամէնէն միամիտն է, ո՛չ էրիկ մարդոց, և ո՛չ ալ կիներուն կը յարմարի :

Անստգլուտ կին ըլլալու համար բուրդ մանելու է եղեր, և հէքիաթներ, առասպելախառն զրոյցներ պատմելու է տուներու վառարանին շուրջը : Երտակը բան մը չենք կըրնար ըսել ան մարդուկներուն, որոնք բան գործ ձգած՝ գիւտեր կ'ընեն, միշտ ի նպաստ կիներուն, որոնք կը խնդան սպանովարար,

ծաղրելով տգեղ սեռը, իրենց կապոյտ ու պզտիկ աչքերը բացխփելով :

Եւրոպայի միւս մասերուն մէջ կը սպասեն որ, Ամերիկայի մէջ սպանովարական ընկերութիւն մըն ալ կազմուի, ամուսնական վտանգներուն դէմ :

Այն ատեն դեռ ատի ամուսնիքը մեղրապալտ պինին պիտի չկրնան առանձին անցընել, իրենց ետեւէն գաղտադողի, սպանովարական պաշտօնեան պիտի համի, պիտի ըստպատէ . . . ամուսնական վտանգներէ ազատելու համար զիրենք :

«Միացեալ Նահանգներուն մէջ, կ'ըսէ սրամիտ քրոնակագիր մը, ամուսնութիւնները շողիով և ամուսնալուծումները ելեքտրականութեամբ կը կատարուին» :

Ուղածուդ չափ կրնաք խնդալ, բայց ամէն պարագայի մէջ մի մոռնաք որ ճիշտ են այս ըսուածները, հակառակ անոր որ, կիները սուրբ ընել կ'ուզուի «Ճերմակ վարդ»ին հաստատուելովը : Երբ մէկ կողմէ կին մը տունը պահել կ'ուզեն, անոր պատուիրելով որ գուլպայ հիւսէ էրկանը համար և սողոյր հագուստները կարէ, անգին, միեւնոյն երկրին, և թերեւս միեւնոյն ալ քաղքին մէջ, կին մը, երանելին տիկին Վէլլ, իր էրկանը դէմ ամուսնալուծման դատ կը բանայ, սա միակ պատճառով որ ամուսինը, — մեծ միջատահաւաք մը, — ննջատենակին մէջ թրթուրներ, պատենաթուեր, մամուկներ, ուտիճներ, խոշոր քարաթօշներ կը անուցանէ, և ինք անհանդիստ կ'ըլլայ գիշերները :

Դատը վաստակած է դիւրագգած տիկինը, և փոխանակ միջատներու, իր ննջատենակին մէջ ուրիշ տեսակ թրթուրներ, աւելի խոշոր քարաթօշներ . . . կը անուցանէ եղեր հիմայ :

Միւսակ մենք չէ՛ որ սպրտաւոր կարօտ գրագէտներ ունինք :

Պրանսայի ամէնէն ծանօթ գրողներէն շատեր, յաճախ առանց դրամի պարտած են Բարիդի մայթերուն վրայ :

Չգենք մուրացիկ գրագէտները, խօսքս պարկիշտ ու ապրուստի կարօտ ըլլալով հանդերձ, չարչարուող գրողներուն վրայ է :

Այս առթիւ, մանրավէպ մը:

Տիկին Նօտիէ, իր էրկանը Շարլ Նօտիէի կը դանգատէր թէ խնայողութիւն չընէր բնաւ:

— Մտածէ՛, բարեկամս, աղջիկինիս դրամօժիտ պիտի չունենայ...:

Օր մը, գրագէտը այլևս ձանձրանալով իր կնոջ անվերջ կրկնութիւններէն, կէս կատակի ձեւով.

— Դրամօժիտ պիտի չունենայ մի... ո՞վ ըստ. անոր համար ես 50,000 ֆրանկ ձգած եմ Լաֆիթի քով:

Օրագրողին կինը, յանկարծիկի եկած.

— Շա՛րլ, կը ծագրե՞ս զիս, կը հարցնէ:

— Եթէ չես հաւատար, գնա՛ հարցուր: Ծագրելու բան չի կայ հոս:

Յաջորդ առաւոռն Տիկին Նօտիէի առաջին գործը կ'ըլլայ մեծանուն գրամատիրոջ երթալ, ուր՝ քիչ մը յուզուած՝ իր այցելութեան նպատակը կը բացատրէ:

— Շա՛տ անգաղտնապահ է սա Նօտիէն, կ'ըսէ Լաֆիթ: Դադանիքը ես միայն դիտէի, բայց քանի որ դո՛ւք ալ գիտէք զայն, ալ բան մը չի մնար ծածկելու: Աւասիկ այն դրամը, զոր ամուսինդ աղջկանդ համար քովս ձգած էր:

Տիկին Նօտիէ տուն կը վերադառնայ, չիօթած: Բայց ամուսինին չիօթութիւնը աւելի՛ մեծ կ'ըլլայ երբ իր կնոջ ձեռքը կը տեսնէ պանքսոմսերու ծրարը:

Կատակները երբեմն ի՞նչ աղուոր են:

Կը կարմրի Նօտիէ և իր կնոջ ձեռքէն ծրարը առնելով Լաֆիթին կ'երթայ ուղղակի:

— Բայց չ'արժեր, կ'ըսէ մեծահարուստ գրամատէրը: Պահեցէ՛ք տօրկա, թող իմ նուէ՛րս ըլլայ: Դուք գրականութեան համար կ'աշխատիք, մինչդեռ ես՝ դրամին. կիսունք չահերնիս. գրականութեան մէջ համբաւ մը կրնա՞ք տալ ինծի: Աղէ՛կ միտքս ինչաւ, մօտ առնէն հրատարակելիք հատորնիդ ինծի՛ ձօնեցէք, եղաւ գնաց, այն օտեն առնելիք— տալիք պիտի չունենանք իրարմէ:

Դիւտը աղուոր էր, ճիշտ Օր. Նօտիէի գրամօժիտին պէս:

Ասոր համար է որ Շարլ Նօտիէի Յիբասակնեբ գրքին առաջին էջին վրայ Լաֆիթին անունը կայ, խոշոր տառերով:

ՄԻՀՐ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԻ ՆՕԹԵՐ

— Երբեք —

ՍՏԹԵՆԻԿ ՄՕԼԷՅՍԱՆ

Երբ 1902ի ձմեռը Վասան Մալեղեան գրականօրէն ու բնականօրէն այնքա՛ն մեղաւազօտ էջ մը կը դրկէր Մասիսին, — Հէլուանի նկարագրութիւն մը, — կրնա՞ր երեւակայել որ տարին չի բոլորած՝ հիւանդներու այդ կայանին մէջ իր վերջին շունչը պիտի երթար փչել իր մանկամարդ քոյրը, Տիկին Մսերեան, եղիպտական տաքուկ արեւ անդօր ըլլալով զինքը կաղզուրելու և բժշկելու: Հէլուանի մէջ ապրիլը անապատին մէջ ապրիլ է, — հակառակ օթէշներուն ու վիլլաներուն, ջերմութիւններուն ու հանրային պարտեզին, որոնք քաղաքակրթութեան պերճանքի չպարտ մը կը փայլեցնեն այդ առաւուռ անկիւնը, — ու հոն մեռնի՛լ մանաւանդ անապատին մէջ մեռնիլ է: Նուագածութեան որ կը լսուի ամէն իրիկուն, կը խառնուի լատինական փոքրիկ եկեղեցիին Angelusը, ու իրարու մօտ արծաղանդուող այս ներհակ և զանախներու դադրելէն ետքն ալ՝ կը շարունակուի լսուիլ հազը, անողո՞ք, խղղո՞ւկ հազը երիտասարդ հիւանդներու որոնք դիշերուան առաջին ստուերներէն դող մը զգալով իրենց վտիտ մարմնոյն մէջ, դողդոջ քայլերով կ'անցնին կ'երթան փողոցներէն դէպի իրենց տուները:

Ու՛րճ Սաթենիկ, որքա՛ն անգամներ ինքն ալ զգաց արդեօք այդ դողը՝ իրիկունս կոչնակին ազդած տարտուռին հետ, իր մահէն քիչ առաջ, երբ պտոյտէ կը վերադառնար իր եղբոր թեւին կրթնած:

Քանի մը տող ալ ես նուիրելու համար իր յիշատակին, ետ կը դառնամ դէպի այն թուականը ուր Տիկին Մսերեան կը կոչուէր Օր. Սաթենիկ Մալեղեան: Այս անունը կը կենդանայի իր հետ ընտանեկան կեանքի շրջան մը որ Օրթադիւղի զարգացած ու ընկերային դասակարգին համար ամէնէն տըպաւորիչներէն մէկը եղաւ՝ եթէ ոչ փայլուններէն, — վասն զի փայլու ալերճանքի ազդեցութիւն չի կար այդ առաւելն երկկոյթներուն

մէջ ուր կենցաղագիտութիւնը սրամտութիւնը, գրական ու աշխարհիկ խօսակցութիւնը միայն ժամադիր կ'ըլլային: Եւ Սաթենիկ Մալեղեան՝ իրեն հասակակից ընկերակիցներու հետ, — Հոփսիմեանցի սանուհիներ ամէնքն ալ, — որոնցմէ շատեր իրմէ կանուխ հողը գրկեցին՝ վաղամեռ «Ֆիմի»էն սկսելով, — կենդանութիւնն ու շնորհն էր այդ հաւաքոյթներուն: Մեր գրադէաններէն ու բանաստեղծներէն շատեր, այդ թուականին զեռ շա՛տ երիտաւարդ և իրենց մտքի ու սրտի է՛ն թարմ չըրջանին մէջ, — կը հրաւիրուէին կու գային Կապուղիէն, Վոսիփրէն, Բերայէն, մասնակցել այդ ընտանեկան soirées-ներուն որոնց *causeries*-ները մէկէ աւելի նիւթեր հայթայթած են իրենց գեղեցկագոյն գրուածքներուն, մէկը բանայանդ մը կ'առաջարկէր, ուրիշ մը նորավէպ մը կը յղանար և երրորդ մը բառախաղ մը կը սահեցնէր: Կիներն ու աղջիկները, թէեւ շատ սակաւաթիւ, հաւասար յաջողութեամբ կը մասնակցէին այդ մատուցական մրցումին՝ աւելցնելով անոնց վրայ իրենց փափուկ անձին շնորհը, իրենց խօսակցութեան անուշութիւնը, իրենց նուրբ գեղեցկութեան ստուերը: Եւ Սաթենիկ Մալեղեան ամէնէն աւելի համակրանքով ողջունուողներէն մէկն էր այդ ճշմարտապէս «սալօնի կեանք»ին մէջ ուր ընտանեկան պարզութիւնն ու անկեղծ մտերմութիւնն մը կը ալիւրէր միշտ սակայն: Սաթենիկ Մալեղեանին ամուսնութենէն ու հեռացումէն ետքը, որուն յաջորդեցին ուրիշ ամուսնութիւններ և ուրիշ հեռացումներ դէպի գերեզման, այդ հաւաքոյթները ցանցառ դարձան ու կորանցուցին իրենց հրապոյրը:

Տարիներ ետքը, 1898ի աշնան, կիրակի իրիկուն մը, Հալքիի եղեւիններու անառակ թարձրերը պտոյտ մը կը կատարէի, մոլար քայլերով, հեռու վարը ծառադիւններուն մէջ պտուկող օտար բաղմութիւնէն որ կը զբօսնուր: Պահ մը Պոլսէն հեռու՝ ծովին կարօտը քաշած էի, ու ծովը կը տարածուէր կապոյտ ու հանդարտիկ, վերջալոյսի ստուերներուն հետ խաղալով կարծեաւ հին ծանօթի մը տեսքն էր անիկայ ինծի համար, ամբողջ վայելք մը, արբուածիւն մը գրեթէ՛ եղեւիններու բոյրին հետ: Խորտուբորդ արահետի մը եզրը, ծառի մը տակ, կնոջնական սիւնէղ մը՝ նշմարեցի յանկարծ, ծանօթ ա՛ն ալ՝ բայց ո՛չ ծովին

պէս անսովորաւ ու միապաղաղ: Շնորհալի հասակը քիչ մը կքած էր, խոշոր գեղեցիկ աչքերը՝ իրենց երբեմնի փայլը պահելով՝ տարտամ նայուածք մը ունէին հիմակ և այտերը, միշտ գունատ-վարդագոյն, թեթեւ հարսութիւն մը կը մտնէին. իր չափանաւագոյն մաղերուն հոյլը միայն կը մնար անսովորաւ, առատ, ոլորուն, հիւանդատ ձեռքի մը անխնամութեան հետքը կրելով սակայն, որ իր մէջ բանաստեղծական բան մը ունէր: Սաթենիկ Մալեղեանն էր, որուն չէի հանդիպած բնաւ՝ իր ամուսնութենէն ի վեր: Սամսոնէն կուգար օգտիփոխութեան համար: Առջի խօսուն աղջիկն էր, քիչ մը տրտամ՝ հիւանդութեան մը նախազգացումով:

— Բայց ի՞նչ ունիք, Տիկին, ըսի՛ հին դրացնութեան մը տուած համարձակութեամբ, հիւանդ չէք երեսնար:

— Օ՛հ, բան մը չէ, պտտասխանեց, կ'իբրեւայ թէ նէօրասթէնի եղեր եմ...

Neurasthénie, այդ թուականին՝ կնոջական ջղային տկարութեանց մէջ ամէնէն աւելի à la mode հիւանդութիւնն էր՝ ուրուն վրայ շարունակ կը գրէին Բարիդեան թերթերը:

— Վիպային հիւանդութիւնն մը, Տիկին, վրայ բերի, որ վախու բան մը չաղդեր ու տեսակ մը հրապոյր ալ կուտայ:

Թեթեւ հազ մը արգիլեց զինքը պատասխանելէ, ու քայլերը շարունակեց մտախորճ, երթալ ընկերանալու համար եզրօրը ու մօրաքրոջը՝ որոնք իրեն կը ողատէին ճամբուն ծայրը: Օրթագիւղի ընտանեկան երեկոյթներուն վրայ խօսեցանք — վասն զի հարկ էր նիւթը փոխել — ու քիչ մըն ալ զիրքերու և լրագիրներու վրայ:

— Ձեր «Եգիպտական Նօթեր»ուն մէջ ի՞նչ գրուիչ նկարագրութիւն մը բերեք էիք Հէլուանի, ըսաւ յանկարծ՝ այժմէութիւն մը քրքրելով: Իրաւ այդչափ սիրուն տեղ է...

— Գահիրէ գացող հիւանդներուն համար միայն, Տիկին, ա՛յն ալ ձմեռը:

Տխուր նախազգացում մը ունեցաւ արդեօք աշնանամուտի այդ իրիկունը թէ օր մը ինքն ալ հոն պիտի երթար խալիւլ իր կեանքին դարունը, — արդէն իսկ աշնան փոխուած՝ յարածուն ու ցաւատանջ հիւանդութեանէն:

S. Ս.

Արսոցաճէր Կ. Ս. ԻիթիիճեԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՑ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ




ՀՐԻՆՆԻ, ԿԵԱՆՔ, ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

Ընկերության դրամագույքը, ամբողջապես վճարուած	10,667,667	Ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ ու տոկոս	54,000,000	»
Երաշխաւորութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնատեղի, Ղալաթիոյ Քարափին վրայ, Մաֆասան հին տեղը

Ընդհ. ԲԵՆԻՔ
Ա. ՀԻԻՐՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ
ԹԵՈՏՈՐ ՌԵԲԵՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննեալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու սափի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՍԻՆԿԷՐ
ՀԱՅԹԱՅԹԻԶ
ՊԱՆԱՏԱՆ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍԼԱԹԱ.

1. Սինկեր լսան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻՏԱՐ

Չարչը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կատարեալ երաշխաւորութիւն։

Մասնահիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԻՒՆԻՕՆ Ապահովագրական Ընկերութեան
Տնօրէնութիւնը 1/14 մարտէն սկսեալ իր
դրամենեակները փոխադրած է Պոլիս, Սուլ-
թան Համամ Կորաչէն Բաթըրճի Օղլու
Բասափը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՅ, Թ. 200

ԿԱԼԱԹԱ-ՍԵՐԱՅԻ ԼԻՍԷԻՆ ԴԷՄ

ԴԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը ճեն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց
(Վկայեալ Բարիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հի-
ւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժա-
կան գործողութիւններ՝ վերջին կատարելա-
գործեալ դրութիւններով:

Բարիզի, Նանսիի հիւանդանոցներուն
մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էքս-
քերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնա-
կան ու փորձառական երկար ուսումնասի-
րութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ.
Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա,
Թարլա Պաշը, թիւ 136:

Ծանօթ. — Հիւանդներ կ'ընդունին ամէն օր
կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, ժամը
1-4 (Ը. Ն.): Երեքշաբթի օրերը միեւնոյն
ժամուն ճրիաբար կը դարմանէ կարօտ հի-
ւանդները: 9—20

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիներով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի դերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի
ապահովագրողը Ձե՛ՐՔ են այն վնասներէն եւ յուսալաբութիւններէն, որոնց
կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation
des bénéfices) ՅՈՒՐԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապա-
հովագրուին:

Ընկերութեան իրամասունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասափ Բաքըրճի Օղլու

Դորձակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ